


Арм.
2-5282a

ՀԱԿՈՒ ԵՂԱԲԱԲ

ԹՈՒՆՍԸ



891.99U
Ա-43

ՀԱՅՄԵՏՐԱՍ

ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1940



ՊՈՒՑ. № 14275

Ա-43

ՅԵՐԿՈՒ ԽՈՍԻ

Հնուց մնացած
Մի խոսք կա փորձած,
Թե՛ — «Գեղը կանգնի՛
Գերան կրկուտրի

Կար չկար՝ մի չար,
Մի գող բազե կար, —
Կառուցը համ թուր,
Համ թրի պես ծուռ,
Ճանկերը կեռ-կեռ,
Ինքը արյունակեր:
Ամեն ոք հանկարծ,
Վորս նկատելիս,
Թևերն արձակած
Վրա յեր տալիս.
Վրա յեր տալիս,
Գնդակի նման
Ներքև եր գալիս
Ու ամեն անգամ
Վորս անում-տանում
Ու անուշ անում:
Յերը փոր կշտանում,
Վեր է բարձրանում
Ու ջինջ կամարում
Ազատ տալառնում:



Պառավ նանի թուխը իսկի
Հանգիստ չուներ նրանից. —
Չեր իմանում վոնց ազատվի
Չար թշնամու բերանից:
Ճուտերն անգամ չգիտեյին՝
Թե վո՞ր կողմը վազվզեն,
Վոր վերևից վրա չբտա
Են արյունակեր չար բազեն:
Հենց փոր նրանք գնում էյին
Աղբանոցը քըջուջի՛
Մայրը արթուն միշտ հսկում էր՝
Վոր վո՞չ մեկը չբկորչի...



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՍ. ԲԻԾՈՒԹԵԿԱ
ՀՍՄՀ-Արմ:ՍՍՐ
Հ. ԿՐԻՍՏՈՒՄՅԱՆԻ ԱՊՈՒՆՏՆԵՐԻ
Մ. ԿՅՈՒՄՅԱՆԻ ԱՊՈՒՆՏՆԵՐԻ

3990-87

Մեկ ել՝ ընթաց... գնդակի պես
 Ցած եր ընկնում գոյ բազեն,
 Մեկին ճանկում ու հայդե, պնկ...
 — Ի՞նչ կուզեյին՝ թող ասեն:
 Տանելուն պես՝ ով տեսնում եր՝
 Չեն եր տալիս դես ու դեն. —
 Թե՛ ոգնեցեք, յեկավ-տարավ
 են արյուններ շար բազեն:
 Մի կողմից ել թուխսն եր ճշում,
 Ծրզրտում եր, կրչկրչում,
 Գնում-գալիս, թեին տալիս,
 կրոլիկում եր ու կանչում. —
 «Վայ, ոգնեցեք, ճուսս չկա,
 Բազեն զարկեց իմ ճուտին,
 Յես վոնց անեմ, վոնց պահպանեմ,
 Վոր ճուտերս նա չուտի»:
 Ամբողջ որը դագար շուներ,
 կրկրում եր քրքրում,
 Չեն եր տալիս, ու խղճալի
 կրչկրչում եր ու ճշում:



Եսպես խեղճ թուխսը
 Յերկար մտածեց,
 Յերկար ոգնության
 Չեն ու ձուն ածեց. —
 Նանը վոչ նրան
 Ոգնության հասավ,
 Վոչ ել մի բերան
 Քաղցր խոսք ասավ:




Ու ճարը կտրած
 Նա մի առավոտ՝
 Վեր կացավ գնաց
 Քաջ աքլորի մոտ:
 Գնաց ամեն բան
 Համ պատմեց նրան,
 Համ խնդրեց, վոր զա
 Իրեն ոգնության:
 Աքաղաղը լսեց
 Ու պատասխանեց.


— «Ծնւղ-րնւ-ղնւ...
 Այ քիրացեղ թխսամեր,
 Յես քեզ հետ եմ, քեզ ընկեր,
 Գնա՛, բաղին ել պատմի,
 Թող նա ել զա մեզ ոգնի,
 Վոր յերեքով միասին,



Մի լավ ծեծենք բաղեյին»:
 Ու թուխսը հասավ,
 Բաղին ել ասավ.
 — Այ Շորոր մոքիր,
 Խնդրեմ ինձ ոգնիր,—
 Դու ել մի մեր ես,
 Չաղերի տեր ես,
 Բաղեն անիրավ
 Ճուտերս տարավ:
 Ոգնիր ինձ. խնդրեմ,
 Գեթ մինն ազատեմ.
 Են քաջ աքլորն ել
 Խոստացավ ոգնել:



— Դ՛ա, դ՛ա, դ՛ա...
 Լափ, լափ, լափ...
 (Բաղն եսպես ասավ).
 — Հավիկ-մարիկ ջան,
 Քանի շատ լինենք՝
 Շուտ կըհաղթենք մենք
 Են չար բազեյին,
 Են գող բազեյին...
 Շուտ արա՛, գնա՛,
 Սազին ել ասա՛»:
 Ու թուխսը հասավ,
 Սազին ել ասավ.
 — Այ ճերմակ հոբիր.



Խնդրեմ ինձ ոգնիր.
 Դու ել մի մեր ես,
 Չագերի տեր ես,
 Բազեն անիրավ՝
 Ճուտերս տարավ:
 Ոգնիր ինձ, խնդրեմ,
 Գեթ մինն ազատեմ.
 Սուլթան աքլորը, Շորոր մոքիրը
 Մեզ հետ կրվենեն:

— Դ՛ու, դ՛ու, դ՛ու...
 Լափ, լափ, լափ,—
 (Սազն եսպես ասավ).
 — Հավիկ-մարիկ ջան,
 Քանի շատ լինենք՝
 Շուտ կըհաղթենք մենք
 Են չար բազեյին,
 Են գող բազեյին.
 Դե գնա՛, ասա՛.
 Մեր հնդուհավին,
 Ասա՛, նա ել գա՛,
 Հասնի մեր կովին»:
 Ու թուխսը հասավ
 Հնդուհավի մոտ,
 Նրբան ել ասավ
 Իր խոսքը վշտոտ.—
 — Այ Հնդու խնամի,
 Խնդրեմ ինձ ոգնիր.—
 Դու ել մի մեր ես,
 Չագերի տեր ես,
 Բազեն անիրավ՝
 Ճուտերս տարավ.

Ոգնիր ինձ, խնդրեմ,
Գեթ մինն ազատեմ.

Են քաջ աքլորը, Շորոր մոքիրը, Ճերմակ
Հոքիրը մեզ հետ կրլինեն:

— Վնխ, վնխ, վնխ,

Լավ, լավ, լավ,—

Հնդուհափն ասավ.

— Հավիկ-մարիկ ջան,

Քանի շատ լինենք՝

Շուտ կըհաղթենք մենք

Են չար բազեյին,



Են գոյ բազեյին.
Շուտ արա՛, գնա՛,
Մեր շանն ել ասա՛»:

Թուխը հասավ,

Շանն ել ասավ.

— Վոսկի հարևան,

Յեկ ինձ ոգնու՞թյան,

Դու ել մի մեր ես,

Չագերի տեր ես.

Բազեն անիրավ՝

Ճուտերս տարավ.

Ոգնիր ինձ, խնդրեմ,

Գեթ մինն ազատեմ.

Սուլթան աքլորը, Շորոր մոքիրը, Ճերմակ
հոքիրը ու Հնդու ինամին մեզ հետ կրլինեն:

— «Հնֆ, հնֆ, հնֆ...

Լավ, լավ, լավ,—

(Շունն ետպես ասավ).

— Հավիկ-մարիկ ջան,

Քանի շատ լինենք,

Շուտ կըհաղթենք մենք

Են չար բազեյին,

Են գոյ բազեյին.

Շուտ արա՛ գնա՛,

Կատվին ել ասա՛»:


Թռավ, հասավ

Կատվին ասավ.

— Մուռան փիսիկ ջան,

Յեկ ինձ ոգնու՞թյան.

Դու ել մի մեր ես,



Չագերի տեր ես.
Բազեն անիրավ՝
Ճուտերս տարավ.
Ոգնիր ինձ, խնդրեմ,
Գեթ մինն ազատեմ.

Սուլթան աքլորը, Շորոր մոքիրը, ձերմակ
հոքիրը, Հնդու խնամին ու մեկ ել մեր
շունը՝ մեզ հետ կըլինեն:

— Մի՛ով, մի՛ով, մի՛ով...

Լավ, լավ, լավ,—

(Մոռանը ասավ).

— Հավիկ ջան, գնա,

Միամիտ մնա.

Հենց վոր ձեն տաս դու՝

Կրգամ ոգնելու:

Կրգամ ոգնելու՝

Են չար բազեյից,

Են գող բազեյից

Քեզ ազատելու:

— Մյուս որը հանկարծ

Բազեն յերևաց.—

Են բարձր սարից,

Մթին անտառից,

Մեկ սևին տալով

Առաջ եր գալի,

Մեկ թևին տալով


Դեպի ցած գալի:

Յեկավ, վոր բակից


Կրկին վորս անի,

Թխսամոր ձագից,

Մի ձագ ել տանի,
 Մի ձագ ել տանի
 Ու անուշ անի:




Թուխան ես անգամ քնած չեմ.
 Հենց բազեյին նկատեց,
 Վոր դեպի ցած կրթուչեր,
 Իսկույն նրա դեմ վազեց,—
 Ճչաց, ծվաց, ծղրտաց.
 — Ե՛յ դու, անխիղճ, անպիտան,
 Գող, ավազակ, չար գազան,
 Ի՞նչ ես ուզում ինձանից,
 Ի՞նչ ես կպել մեր տանից.
 Գնա՛, կորի՛, թե չե՛ քեզ՝
 Պատառ-պատառ կանեմ յես: —
 Ճչաց թուխսը կատաղած,
 Վրրա ընկավ բազեյին.
 Ու հենց են եր՛ քիչ մնաց,
 Վոր մեկ-մեկու գգեյին.—
 Մեկ ել հանկարծ դուրս յեկան
 Թխսամորը ոգնության:
 Աքլորն յելավ թմբի ծերը
 Ծրղրտաց.—
 — Կո՛ո՛, -կո՛-կո՛-կո՛...
 Բազը յեկավ թևահարեց,
 Ճրղ-ճրղաց.—
 — Ղա՛-ղա՛-ղա՛...
 Սազը հասավ, վիզը մեկնեց,
 Ճրչ-ճրչաց.—
 — Չը՛ր-չը՛ թ-չը՛ր-չը՛ թ.
 Հնդուհավը ուռուցվորվեց,
 Բըլդ-բըլդաց.—
 — Բըբ, բըբբ...բըբբ...
 Մի կողմից ել շունը հաջեց
 Կատաղած.—




Ո՛ւնֆ, ո՛ւնֆ, ո՛ւնֆ...
Շան յեակից կատուն մլավեց
Բարկացած. —
Միան... միան-միան...
Ել բակուժը թիսամորը
Բարեկամ
Հավ չմնաց, վոր դուրս չգար
Ոգնության:
Բազեն տեսավ բանը բուրդ է,
Ես անցամ՝



Թևին տվեց ու ազատեց
Ինքնիրան. —
Թուով, գնաց աչքը ենպես
Վախեցած,
Վոր գնալիս՝ ել չնայեց
Դեպի ցած:



Են գնալն եր՝ գնաց, ընկավ
 Սարեսար,
 Են սարիցը անցավ դեպի
 Մուլթ անտառ,
 Ել մի որ գեղը չեկավ
 Վորս անի
 Ու պառավի թխսամորից
 Չագ տանի:
 Են որվանից թուխը արձակ
 Համարձակ
 Ճուռերի հետ չափ-չփում եր
 Կալ ու բակ.
 Չափ-չփում եր, քչուջ անում
 Աներկյուղ՝
 Գիտեր, վոր ել բագեն չի գա
 Իրենց գյուղ:



Նկարները, ինքնուս Ադ. Շահվերդյանի
 Պատ. խմբագիր՝ Վ. Գրիգորյան
 Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան
 Լիտոգրաֆ. նկարիչ՝ Ս. Գասպարյան
 Սրբագրիչ՝ Ս. Փարսադանյան

«Ազգային գրադարան»



NL0390941

Գլավիլիտի լիազոր Բ—1090, Տրասպորտի
 Պատվեր 213. Տիրաժ 5000.

Հայկեանրատի տպարան, Յերևան, Լենինի, 65.

Ը. 1940 Գ.
 ԱԿՏ № 295
 Вкладн. л. _____

ԳԻՆԸ 1 Ռ. 20 Կ.

6353

Арм.

2-5282_a

Ա. ԱԳԱԲԵ

НАСЕДКА

Գրա. Արմ. ՍՍՐ, Երևան, 1940 թ.